ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2008 թվականի մարտի 11-ի
թիվ 68-Ն որոշմամբ հաստատված
"Ազդագիր և հաշվետու թողարկողների հաշվետվություններ"

# ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԵՐԱՌՈՂ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ


**ՖԻՆՔԱ ՈՒՎԿ**
**Փակ Բաժնետիրական Ընկերություն**
**ՀՀ, ք. Երևան, Ազաթանգեղոս փ. 2ա, հեռ. (+374 12) 55 55 55**
**էլ. փոստ info@finca.am**


**Հաշվետվություն թիվ 12, 26.06.2019թ.**

*"Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ հաշվետվությունում ներառվող տեղեկությունները ճշգրիտ և ստույգ են և չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել փաստաթղթի ամբողջականությունը":*

ստորագրող անձինք՝

| (անուն, ազգանուն) | (պաշտոն) | (ստորագրություն) | (ամսաթիվ) |
|---|---|---|---|
| **Անուշ Պետրոսյան** | **Վարչության անդամ, Ֆինանսական տնօրեն** | | 26.06.19. |
| **Արտակ Միքայելյան** | **Վարչության անդամ, Գլխավոր հաշվապահ** | | 26.06.2019թ. |
| **Հարություն Չադրյան** | **Վարչության անդամ, Իրավաբանական բաժնի ղեկավար** | | 26.06.2019թ. |

Ստորագրությունները հավաստում եմ՝

| (անուն, ազգանուն) | (պաշտոն) | (ստորագրություն) | (ամսաթիվ) |
|---|---|---|---|
| **Հրաչյա Թոխմախյան** | **Վարչության նախագահ, Գլխավոր տնօրեն** | | 26. 06. 2019 |

26 հունիս 2019թ.

«ՖԻՆՔԱ»
"FINCA"
00445174

# ՏԵՂԵԿԱՆՔ

«ՖԻՆՔԱ» ՈւՎԿ ՓԲԸ միակ բաժնետեր “ՖԻՆՔԱ Մայքրոֆայնենս Կոոպերատիվ Յու.Էյ.”-ի 24.06.19 թ. N02/2019 որոշման համաձայն՝ ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 67 հոդվածի 1-ին մասով, 68 հոդվածի 6-րդ մասով և Ընկերության կանոնադրության 11.8 կետով՝ Ընկերության միակ բաժնետերը որոշեց՝

1. Ընկերության Տնօրենների Խորհրդի անդամներ Վաժա Մայսուրաձեին, Արարատ Գյուլումյանին և Դեյն Սթիվեն ՄաքԳվայերին վերանշանակել որպես Ընկերության Տնօրենների խորհրդի անդամներ սկսած 24.06.2019թ.–ից 3 (երեք) տարի ժամկետով և հաստատել/սահմանել վերջիններիս վարձատրության և ծախսերի փոխհատուցման չափը և կարգը՝ համաձայն Ընկերության միակ բաժնետիրոջ 12.06.2019թ. թիվ 01/2019 որոշման 1-ին կետով հաստատված՝ Ընկերության Խորհրդի անդամների վարձատրության և ծախսերի փոխհատուցման պայմանների և կարգի և Ընկերության Տնօրենների Խորհրդի անդամ Վաժա Մայսուրաձեին վերանշանակել Ընկերության Տնօրենների խորհրդի նախագահի պաշտոնում:

2.Ընկերության բաժնետոմսերի դիմաց տարեկան շահութաբաժնի վճարմանը ուղղել 1,415,401,694 (մեկ միլիարդ չորս հարյուր տասնհինգ միլիոն չորս հարյուր մեկ հազար վեց հարյուր իննսունչորս) ՀՀ դրամ (ներառյալ հարկերը), որից 885,389,550 (ութ հարյուր ութսունհինգ միլիոն երեք հարյուր ութսունինը հազար հինգ հարյուր հիսուն) ՀՀ դրամը (ներառյալ հարկերը) 2018թ.–ի Ընկերության շահույթից, իսկ 530,012,144 (հինգ հարյուր երեսուն միլիոն տասներկու հազար հարյուր քառասունչորս) ՀՀ դրամը (ներառյալ հարկերը) նախորդ տարիների ընթացքում չբաշխված շահույթից՝ շահութաբաժնի ընդհանուր գումարի վճարման վերջնաժամկետ սահմանելով մինչև 2019թ. դեկտեմբերի 31-ը: